ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԼԵՆՈՒՂՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

ԹԻՎ- 0-14 09-03-2015թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ուղարկվում են Լենուղի գյուղական համայնքի ավագանու՝ 05-03-2015 թվականին կայացած թիվ-1 նիստի որոշումները:

Առդիր-13 թերթ:

ԼԵՆՈՒՂՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

05-ԸՄԱՐՏԻ 2015Թ. Թիվ-1
Գ.Լենուղի

ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով Լենուղի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի գյուղական համայնքի ավագանու՝2015թվականի մարտի 05-ի Թիվ-1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան

Հ.Խաչատրյան

Դ.Սարգսյան

Գ.Աբաջյան

Ռ.Ալեքսանյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱՋԱՐՅԱՆ

2015թ.05-ը մարտի
Գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 05-Ի
ԹԻՎ-1 ՆԻՍՏԻ ԹԻՎ-1 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

Թիվ-1-նիստի 05-03-2015թ.ժամը՝ 10:00

1.ԼԵՆՈՒՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ.Մ.ԿՈՍՏԱՆՅԱՆ/

2.ԼԵՆՈՒՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ.Մ.ԿՈՍՏԱՆՅԱՆ/

3.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ.Գ.ՂԱԶԱՐՅԱՆ/

4.ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ-8 ԱՐՏԱՀԵՐՏ ՆԻՍՏԻ ԹԻՎ-24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ.Լ.ՍԱՐԳՍՅԱՆ/

5. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ.Ա.ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ/

6.«ՀԻՄՆԱՔԱՐ» ՍՊԸ-ԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ.Գ.ՂԱԶԱՐՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

05-ը Մարտի 2015թ. Թիվ-02

ԼԵՆՈՒՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 11-րդ հոդվածի 2-րդ կետով Լենուղի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել ավագանու նիստերի հրավիրման ժամանակացույցը և սահմանել նիստերի հրավիրման ամիսները համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան
Հ.Խաչատրյան
Դ.Սարգսյան
Գ.Աբաջյան
Ռ.Ալեքսանյան

ԼԵՆՈՒՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱՋԱՐՅԱՆ

2015թ.05-ը մարտի
Գ.Լենուղի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Լենուղի համայնքի
ավագանու 2015թմարտի 05-ի
թիվ-1 նիստի թիվ -2 որոշման

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Թիվ - 1 նիստ մարտի- 05

2.Թիվ - 2 նիստ ապրիլի -28

3.Թիվ - 3 նիստ հունիսի -29

4.Թիվ -4 նիստ օգոստոսի -28

5.Թիվ - 5 նիստ հոկտեմբերի -28

6.Թիվ - 6 նիստ դեկտեմբերի -28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

05-ը ՄԱՐՏԻ 2015թ. Թիվ-3-Ն
Գ.Լենուղի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով» 69-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի գյուղական համայնքի 2014թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Կոստանյան Նորայր

Խաչատրյան Հմայակ

Աբաջյան Գոռ

Սարգսյան Դավիթ

Ալեքսանյան Ռազմիկ

ԼԵՆՈՒՂՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱԿԵԼԿԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՄԱՐՏԻ 5 -Ի
ԹԻՎ 01 ՆԻՍՏԻ N- 3-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

Լենուղի գյուղական համայնքի 2014 թվականի վարչական բյուջեն ըստ եկամուտների կատարվել է

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

Հարկային եկամուտների գծով նախատեսված 15120,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 14306,1 հազար դրամ , կամ կատարվել է 94,6% -ով,
այդ թվում՝
1.1Հողի հարկի պլանով նախատեսված 7880,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 7010,0 հազար դրամ, կամ կատարվել է 89% -ով:

1.2 Գույքահարկի պլանով նախատեսված 3250,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 4117,7 հազար դրամ , կամ կատարվել է 126.7% -ով:

2.ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ

1.Գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գծով նախատեսված 2200.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1807,0 հազար դրամ, կամ կատարվել է 82,1%-ով:

2.այլ ոչ հարկային եկամուտներ, տեղակնա տուրքեր և վճարներ նախատեսված 30,0 փաստացի մուտքագրվել է 0 հազար դրամ :

3.Մատուցված ծառայությունների դիմաց գանձված վճարներ՝նախատեսված 1760,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 1350,8 հազար դրամ:

3.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

ա)Պաշտոնական ընթացիկ դրամաշնորհների գծով (պետական բյուջեից ստացվող դոտացիա) նախատեսված 18265,2 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 18265,2 հազար դրամ, կամ կատարվել է 100%-ով

Լենուղի գյուղական համայնքի 2014 թվականի բյուջեով նախատեսված 33385,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 32571,5 հազար դրամ կամ կատարվել է 97,6%:

ԾԱԽՍԵՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

ա) Տեղական ինքնակառավարում՝ ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժին 1 խումբ 1 դասով նախատեսված 18475,4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 17390,1 հազար դրամ ,կամ կատարվել է 94,1 %-ով:

բ)Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ ծախսերի գործառնական դասակարգման 01բաժին 3 խումբ 3 դասով նախատեսված 150,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 146,6 հազար դրամ, կամ կատարվել է 97,7-% ով :

գ)Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ՝ ծախսերի գործառնական դասակարգման 01 բաժին 6 խումբ 1 դասով նախատեսված 1450,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1440,0 հազար դրամ կամ կատարվել է 99,3 %-ով :

2.Աղբահանություն ծախսերի գործառնական դասակարգման 05 բաժին 1 խումբ 0 դասով նախատեսված 1140,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 1138,9 հազար դրամ, կամ 99,9 %-ով:

3.Հանգիստ, մշակույթ և կրոն ծախսերի գործառնական դասակարգման 08 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 4600,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 4540,0 հազար դրամ կամ կատարվել է 98,7 %-ով:

4.Սոցիալական պաշտպանության ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 2220,0 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2220,0 հազար դրամ, կամ կատարվել է 100 %-ով:

5.Բնակ. շին. և կոմունալ ծառայությունների գործառնական դասակարգման 06 բաժին 0 խումբ 0 դասով նախատեսված 5350,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 5132,0 հազար դրամ, կամ կատարվել է 95,9 %-ով:

2014թ. վարչական բյուջեով նախատեսված 33385,4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 32007,6 հազար դրամ, կամ կատարվել է 95,8 %-ով:

ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

2014թ. ֆոնդային բյուջեով նախատեսված 6807,4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 2206,0 հազար դրամ:

1.Օրենսդիր և գործադիր մարմիններ 01 բաժին 1 խումբ 1 դասով նախատեսված 1607,4 հազար դրամի դիմաց ծախսը կազմել է 0 հազար դրամ,

2.Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այդ թվում Զրամատակարում 06 բաժին 3 խումբ 1 դասով նախատեսված 2650,0 հազար դրամի դիմաց ծախսվել է 2166,0 հազար դրամ, կամ կատարվել է 81,7 %-ով:

Որոգում 06 բաժնի 5 խումբ 1 դասով նախատեսված 2500,0 հազ դրամի դիմաց կազմվել է 0 հազ դրամ

Գրադարան 08 բաժնի 2 խումբ 1 դասով նախատեսված 50,0 հազ դրամի դիմաց ծախսվել է 40,0 հազ դրամ:

Աշխատավարձի և եկամտահարկի վճարման դիմաց պարտք չկա:

Տարեվերջի մնացորդ ընդամենը 565,2 հազար դրամ որից՝

Վարչական բյուջե - 563,9 հազար դրամ

Ֆոնդային բյուջե - 1,3 հազար դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

05-ը մարտի 2015թ. Թիվ-4-Ն
Գ.ԼԵՆՈՒՂԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ-8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԹԻՎ-24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, երրորդ մասով, 56-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով Լենուղի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Լենուղի համայնքի ավագանու 2014թվականի դեկտեմբերի 18-ի թիվ-8 արտահերթ նիստի Արմավիրի մարզի Լենուղի համայնքի 2014թ. բյուջեն հաստատելու մասին Թիվ-24-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություն և լրացումները՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական օրվան հաջորդող հրապարակման տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ Կոստանյան Նորայր
Խաչատրյան Հմայակ
Աբաջյան Գոռ
Սարգսյան Դավիթ
Ալեքսանյան Ռազմիկ

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ-1 ՆԻՍՏԻ ԹԻՎ-4-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ-8 ՆԻՍՏԻ ԹԻՎ-24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1)Հաստատել տարեսկզբի մնացորդը ընդամենը 565,2 հազար դրամ այդ թվում՝ վարչական բյուջե 563,9 հազար դրամ, ֆոնդային բյուջե 1,3 հազար դրամ: Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի 563,9 հազար դրամը ենթակա է մուտքագրելու ֆոնդային բյուջե:

2)Պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան պակասեցնել 1,8 հազար դրամով՝ համաձայն«ՀՀ պետական բյուջեի մասի» ՀՀ օրենքով նախատեսված հատկացումների ընհանուր ծավալի բաշխման:

3)Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար՝ ավելացնել 1301,8 հազար դրամով:

4)Գույքահարկ փոխադրամիջոցների համար ավելացնել 1000,0 հազար դրամով:

5)06 բաժնի 3 խմբի 1 դասի 5113 հոդվածին ավելացնել 565,2 հազար դրամ:

6)04 բաժնի 2 խմբի 4 դասի 4657 հոդվածին ավելացնել 2300,0 հազար դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

05-Ը ՄԱՐՏԻ 2015թ. Թիվ-05

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով համայնքի ղեկավարի ներկայացմամբ Լենուղի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Լենուղի գյուղի սոցիալապես անապահով ընտանիքներին տալ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան

Հ.Խաչատրյան

Դ.Սարգսյան

Գ.Աբաջյան

Ռ.Ալեքսանյան

ԼԵՆՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

2015թվականի մարտի 05
գ.Լենուղի

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԼԵՆՈՒՊԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015Թ. ՄԱՐՏԻ
05-Ի ԹԻՎ-01 ՆԻՍՏԻ ԹԻՎ-5 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ԼԵՆՈՒՊԻ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

1	Մարտինյան Հովհաննես	15000դրամ
2	Մարտինյան Մարգարիտ	15000դրամ
3	Միրխոյան Օվսաննա	30000դրամ
4	Փաշայան Հասմիկ	30000դրամ
5	Աբաջյան Կամո	30000դրամ
6	Գասպարովա Ծովինար	35000դրամ
7	Երանոսյան Նախշուն	30000դրամ
8	Գինոսյան Աբրահամ	30000դրամ
9	Ամիրյան Արմանուշ	50000դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԼԵՆՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

05-Ը ՄԱՐՏԻ 2015թ. N-6

«ՀԻՄՆԱՔԱՐ»ՍՊԸ-ԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության ՓՄՁԶԱԿ-Ի և ԱՄՆ-Ի ՄԶԳ-Ի կողմից ֆինանսավորվող «Գործընկերություն հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի շրջանակներում համայնքի ներդրման մասը որը կազմում է 2200000 դրամ տրամադրել ընթացիկ դրամաշնորհ «Հիմնաքար» ՍՊԸ-ԻՆ շինարարություն կազմակերպելու համար:
2.Կնքել պայմանագիր ծրագիրը իրականացնող «Հիմնաքար» ՍՊԸ-Ի հետ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝ ԿՈՂՄ

Ն.Կոստանյան
Հ.Խաչատրյան
Դ.Սարգսյան
Գ.Աբաջյան
Ռ.Ալեքսանյան

ԼԵՆՈՒՂՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՂԱԶԱՐՅԱՆ